



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«23» հունիսի 2017 թվականի N 50 ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 7 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգի» 4-րդ կետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի «Արթուր Խաչատրյանին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետ նշանակելու մասին» N 611-Ա որոշումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 10-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների կազմման աշխատանքները համակարգող Շիրակի մարզային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2006 թվականի դեկտեմբերի 18-ի N 122 կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 7 կարգադրության հավելվածի մեջ «Հովսեփ Սիմոնյան» բառերը փոխարինել «Արթուր Խաչատրյան» բառերով:



Իսկականի հետ ճիշտ է

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ